**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ**

**Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

«24» մարտի 2025 թ. N 39-Լ

## ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐԴԻՐԻ ԿԱՍԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 139-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորող հանձնաժողովի 2025 թվականի մարտի 20-ի N 15 արձանագրությունը

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Կասեցնել «ԶԵԹ-ՊՐՈՖԻԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման 1-ին դասի լիցենզիային (ՔՊԼ- 000288) կից «Բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ» ենթատեսակի ներդիրի (ՔՊՆ-000288-04) գործողությունը: Կասեցման ժամկետ սահմանել մինչև խախտման պատճառի վերացումը:
2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝ ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն ընդունելու մասին հրամանում նշված իրավաբանական անձին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

24.03.2025

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ